ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

0010 ք.Երևան, Վ. Սարգսյան 5, Հեռ. (+37410) 511-703

ՎԴ - _ Ե__

«17» հուլիսի 2020թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ՏԻԿԻՆ ԱՐՄԻՆԵ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Մելիքսեթյան,

Թիվ ԱՐԴ/0029/13/19 դատական գործով Ձեր կողմից 2020 թվականի հուլիսի 3–ին կայացված՝ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին որոշման կապակցությամբ նախ հարկ եմ համարում նշել հետևյալը.

ՀՀ վճռաբեկ դատարանն Արթուր Այվազանի գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշմամբ անդրադարձել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ ներկայացվող բողոքների ենթակայության հարցին՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) [Պ]ատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված գործողություններն ու որոշումները հանդիսանում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու քրեաիրավական ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ տարրեր, հետևաբար դրանք նույնպես բխում են քրեաիրավական հարաբերություններից, և դրանց դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեաիրավական նորմերի կիրառմամբ:*

Ընդ որում, չնայած այն հանգամանքին, որ այս դեպքում մասնավոր անձը (դատապարտյալը) վիճարկում է վարչական մարմնի իր շահերին առնչվող որոշման կամ գործողության օրինականությունն ու հիմնավորվածությունը, այդուհանդերձ, տվյալ վեճը չի կարող համարվել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճ, որի լուծումն ընդդատյա է վարչական դատարանին: Քրեաիրավական հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերությունների տեսակ են, սակայն այս դեպքում շահագրգիռ անձի բողոքի քննարկման և լուծման իրավասությունն օրենսդրորեն վերապահված է ընդհանուր իրավասության (քրեական) դատարանին և դուրս է վարչական դատարանի իրավասության շրջանակներից:

Վճռաբեկ դատարանի վերոշարադրյալ մոտեցումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...):

2. Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված գործերը, քրեական վարույթի ընթացքում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը, ընդհանուր իրավասության կամ քրեական դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, սնանկության վարույթում ծագող իրավահարաբերություններից բխող գործերը»:

Հիմք ընդունելով (...) [վերը] շարադրված եզրահանգումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերի վերաբերյալ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ շահագրգիռ անձանց բողոքները ենթակա են քննության դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավազորության սահմաններում (...)[1]»:

ՀՀ սահմանադրական դատարանը՝ 2019 թվականի հունվարի 22-ի թիվ ՍԴՈ-1439 որոշմամբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի գործողությունների և որոշումների դեմ ներկայացվող բողոքների ենթակայության հարցի կապակցությամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. *«(...) Անդրադառնալով (...) [այն*

[1] Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ *Արթուր Այվազյանի* գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ2/0007/15/12 որոշումը, կետեր 20-21:

հարցին], թե ինչ դատավարական կարգով պետք է առաջնորդվել դատապարտյալի կողմից ՔԿՀ պետի որոշումների դատական կարգով բողոքարկումները քննելիս, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վերոհիշյալ հարցերի կարգավորման իրավասությունը վերապահված է օրենսդրին, որի կողմից առաջարկվող լուծումները կարող են առնչություն չունենալ սույն գործով վիճարկվող դրույթների հետ: Մասնավորապես, պատժի կրման ընթացքում դատապարտյալի իրավունքների դատական պաշտպանության վերաբերյալ իրավակարգավորումները կարող են նախատեսվել ինչպես վարչական դատավարության, այնպես էլ քրեական դատավարության կամ այլ օրենսդրության շրջանակներում:

Սահմանադրական դատարանը նաև նշում է, որ մինչև Ազգային ժողովի կողմից սույն որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին:

Միաժամանակ, Օրենսգրքի 41-րդ հոդվածում՝ դատապարտյալի բողոքները քննելու դատարանի լիազորության բացակայությունը չի կարող փոխհատուցվել Օրենսգրքի 49-րդ գլխով նախատեսված ընդհանուր ընթացակարգերի կիրառմամբ, քանի որ դրանցով չեն լուծվում մի շարք առանցքային հարցեր, մասնավորապես՝ տարածքային ընդդատության, բողոքի քննության ժամկետների, կարգի առանձնահատկությունների, ապացուցման բեռի բաշխման, ինչպես նաև կայացվելիք դատական ակտի բովանդակության և դրա բողոքարկման հետ կապված խնդիրները (...)»[2]:

Անդրադառնալով թիվ ԱՐԴ/0029/13/19 դատական գործով Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին Ձեր որոշմանը՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ առաջին ատյանի դատարանները ***քննում են*** բոլոր քրեական գործերը, քրեադատավարական

[2] Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի հունվարի 22-ի թիվ ՍԴՈ-1439 որոշումը, կետ 4.6:

օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:

Նույն օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *առաջին ատյանի դատարանին **ընդդատյա են** այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:*

Նույն օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, պարզելով, որ ստացված գործն ***ընդդատյա չէ*** իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:

*Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն օրենսգրքի 44-րդ, 47-րդ կամ 48-րդ հոդվածով նախատեսված **ընդդատության կարգի** խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: (...):*

Նույն օրենսգրքի ***«Ընդդատության մասին վեճերը լուծելը»*** վերտառությամբ 51-րդ հոդվածի համաձայն՝ ***առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը:***

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի ***«Ընդդատության և ենթակայության մասին վեճերը»*** վերտառությամբ 26-րդ հոդվածը սահմանում է.

1. Գործն ըստ տարածքային ընդդատության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը:

2. Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

4. Սույն հոդվածով սահմանված կարգը կիրառվում է նաև վարչական կամ սնանկության դատարանի կողմից համապատասխանաբար վերահսցեագրված հայցադիմումի կամ հանձնված գործի նկատմամբ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի համաձայն՝

1. Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

2. Պահանջն ըստ ընդդատության վերահասցեագրելու վերաբերյալ որոշումը դատարանը կայացնում է պահանջն իրեն ընդդատյա չլինելու վերաբերյալ հանգամանքը պարզելուց հետո՝ եռօրյա ժամկետում՝ այն ուղարկելով դատավարության մասնակիցներին:

15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործերի վարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սնանկության դատարանում (այսուհետ՝ դատարան): Սնանկության գործը վարվում է դատավորի կողմից միանձնյա:

15.04.2020թ.-ից գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի նախագահը հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Վերը նշված իրավական նորմերի համակարգային վերլուծությունից հետևում է, որ.

1. քրեական դատավարության կարգով գործի քննության ընթացքում տարածքային ընդդատության կանոնի խախտում հայտնաբերվելու դեպքում դատարանը գործն ուղարկում է ըստ ***տարածքային ընդդատության***՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննելու իրավասություն ունեցող մեկ այլ

առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ գործի հետագա քննությունն իրականացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի նախագահը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով նախատեսված իր լիազորությունն իրականացնելիս կարող է բացառապես լուծել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև ծագած ***տարածքային ընդդատության*** մասին վեճերը:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործի քննության ընթացքում տարածքային ընդդատության կանոնի խախտում հայտնաբերվելու դեպքում դատարանը գործն ուղարկում է ***ըստ տարածքային ընդդատության***՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ գործի հետագա քննությունն իրականացնելու համար:

Հետևաբար, Վճռաբեկ դատարանի նախագահը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունն իրականացնելիս կարող է բացառապես լուծել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև ծագած ***տարածքային ընդդատության*** մասին վեճերը:

3. Վճռաբեկ դատարանի նախագահի լիազորությունների շրջանակում է նաև Վարչական դատարանից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան վերահասցեագրված գործերի, ՀՀ սնանկության դատարանի կողմից ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան հանձնված գործերի, ինչպես նաև ընդհանուր իրավասության դատարանից ՀՀ սնանկության դատարան հանձնված քաղաքացիական գործերի ենթակայության վերաբերյալ վեճերի լուծումը, որն իրականացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված՝ ենթակայության վերաբերյալ ծագած վեճերի լուծման համար նախատեսված կարգով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված են վարչական

գործերի առարկայական ընդդատության կանոնները, ինչպես նաև հայցադիմումը վերահասցեագրելու մեխանիզմը:

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ պահանջն իրեն ընդդատյա չլինելու հիմքով գործն այլ դատարանի քննության ուղարկելու լիազորություն բացառապես վերապահված է Վարչական դատարանին:

Տվյալ դեպքում, թեև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Մելիքսեթյանի 03.07.2020թ. կայացված «Ընդդատության մասին վեճը լուծելու համար գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին» վերտառությամբ որոշումը հղում է պարունակում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածին, որը սահմանում է ընդդատության մասին վեճերի լուծման կարգը, որը, ինչպես արդեն իսկ հիմնավորվեց վերոշարադրյալում, բացառապես վերաբերում է տարածքային ընդդատության վեճերին, որպիսիք լուծելու իրավասությունը վերապահված է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին, այդուհանդերձ, նույն որոշման բովանդակության ուսումնասիրությունից հետևում է, որ նշված որոշմամբ բարձրացվել է ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների միջև գործի քննության ***տարածքային ընդդատության*** վերաբերյալ վեճ, այլ, ըստ էության, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով գործեր քննող առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի և Վարչական դատարանի միջև գործի քննության ենթակայության վերաբերյալ վեճ, որպիսի վեճի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու լիազորություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վերապահված չէ ընդհանուր իրավասության դատարանին, համապատասխանաբար և նման վեճը լուծելու և որոշում կայացնելու իրավասություն վերապահված չէ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորումները, տեղեկացնում եմ, որ բարձրացված հարցի քննարկումը և

լուծումը դուրս է ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով սահմանված լիազորությունների շրջանակից, որպիսի պարագայում և բացակայում է բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից համապատասխան որոշում կայացնելու (վեճը լուծելու) օրենսդրական հիմքը:

Առդիր՝ դատական գործը՝ բաղկացած 2 հատորից, 1-ին հատորը՝ 75, 2-րդ հատորը՝ 81 թերթերից:

Հարգանքով՝

ԵՐՎԱՆԴ ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ